

**VIII. ՀՀ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ  
ՀՀ ԱՎԾ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ  
ՓԱՍՏԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐ**

Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծրագրերի, 2005թ. համար հաստատված «Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի» տարեկան նախահաշիվների նկատմամբ փաստացի հատկացվել են.

- պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման համար (01.07.01 ծրագրով) 352260.5 հազ. դրամ՝ նախատեսված 372300.6 հազ. դրամի փոխարեն, կամ ներկայացված բյուջետային հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 94.6%-ով (2004թ.՝ 97.1%-ի փոխարեն):

-պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման համար (01.07.03 ծրագրով) 197429.4 հազ. դրամ՝ նախատեսված 208000.0 հազ. դրամի փոխարեն, կամ ներկայացված բյուջետային հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 94.9%-ով (2004թ.-ին՝ 92.6%):